

օրուան, զոր Առաքել «ի տօնի Յարութեան Ղազարու» գիտէ, միաբան են երկու վկայութիւններն իրարու յայնմ, որ մահը պատահած է 1627, Մարտ 17ի՝ Ղազարու Յարութեան գիշերը, երբ կը լուսանար Մարտ 18. այնպէս որ մահուան բօթը հնչած է ժողովրդեան Մաղկազարգի առաւօտ:

Մեւքիսեղեկ կը յուսար թէ Լեհաստան գումար մը հանգանակելով սիրաի կարենար վերադառնալ Հայաստան եւ վճարել Աթոռին պարտքը: Վերջնականապէս չէր հրաժարած: Այս կը տեսնուի իւր Կտակէն որուն մէջ, մօտալուտ տեսնելով մահը, «զաթոռն էջմիածնի յանձնէ Իսահակ կաթողիկոսին»:

Ազգը չճանչցաւ սակայն զՍահակ օրինաւոր կաթողիկոս. Մեւքիսեղեկի մահէն դեռ տարի մ'ետքը, 1628 Յունուար 25ին Յակոբ Թոխաթեցի ի Չամոսցա կը գրէր. «ի ժամանակս յայս կաթողիկոս ի Ս. Էջմիածին ոչ գիտեմք թէ ով ոք է»²²:

«1626» տարւոյ տակ, որ պատճառ եղաւ ինձ, Հանդ. Ամս., 1933, էջ 184 նշանակելու կաթողիկոսին մահուան տարին «1626 Մարտ 18»: Ի նպաստ 1627 տարւոյն կը վկայէ նաեւ Յակոբ Թոխաթեցի, որ 1628ին կը գրէր ի Չամոսցա. «յանցեալ ամին, որ էր թուականն Հայոց ՌՀԶ. վախճան ընկալաւ տէր Մեւքիսեղ կաթողիկոսն ի Կամենից» (Կամենից, էջ 179):

²² Կամենից, 179: — Վիեննայի Միտթ. Մատ. Թ. 273ին գրիչը 1628ին անձանօթ օրուան կաթողիկոսին անուան՝ դատարկ տեղ թողուցած է. երկրորդ գրիչ մը լրացուցած է «Մեւքիսեղեկի» անուամբ (Տաշեան, Ցուց., 708): Այսպէս նաեւ Սրապիոն Բարերգացի ի Սեչով դեռ 1629ին չէ լսած թէ ո՞վ յաջորդած է Աթոռին վրայ (Կամենից, 181—182):